372. ՄԻ ԿՈՏՐԱԾ ԶԱՆԳԱԿԻ ՎՐԱ.

Ցիշատակ է վանկակս Ղազարին, որ է որդի Քիրիգորին, է թոռն Եսաւրին. Յուսէփի որդի Պալյէն, որ է Պողոս Թուլգեր (հիւսն). Ես Շահնա կառնեցի *(ձուլեցի)* գինն Է :Գ: Թումանն:

Ծանոթ. *Փակագծերի միջի բառերի բացատրությունները Բարխուդարյանցինն են։*

Հրատ. Բարխուդարեանց, 236։

26. ՎԱՂՈՒՀԱՍ ԳՅՈՒՂ ԵՎ ՇՐՋԱԿԱՅՔ

Արցախի հին և մեծ գյուղերից է։ Գտնվում է Թարթառ գետը հատող մեծ և հին ճանապարհի կամուրջին մոտիկ, հնագույն Վայկունիք և Բերդաձոր գավառների հատման վայրում։ Հին ճանապարհը Սևանի ավազանից երկու ճյուղով իջնում էր Թարթառի ափը, մեկը Վարդենիսի շրջանի այժմյան Դաշքենդ գյուղի վրայով մտնում Ծար ավանը և անցնում Իստիսու առողջարանը, իսկ մյուսը նույն շրջանի Ջող գյուղից և համանուն լեռնանցքից իջնում էր Թարթառի ափը և իր մեջ առնելով առաջին ուղին, հասնում էր Վաղուհաս գյուղի տակ եղած կամուրջին, ապա կտրելով հարավից-հյուսիս ամբողջ Ղարաբաղը, հասնում Պարտավ քաղաքը։ Այժմ այդ ճանապարհը Ղարաբաղի հատվածում բանուկ է մինչև Իստիսու առողջարանը։ Վաղուհասի մոտ, Թարթառի վրա այժմ կառուցված է մի նոր կամուրջ, որից 20—30 մետր վերև մնում են հին կամուրջի մնացորդները, իսկ գետի ձախ ափին՝ փոքրիկ քարավանատան-իջևանի ավերակները։

Վաղուհասի շրջապատում հնում եղել են մի քանի բնակավայրեր, որոնց ավերակներն են մնում՝ փոքրիկ, մատուռանման եկեղեցիներով։ Այդ միջավայրում են եղել նաև քաղաքական ու կրոնական նշանավոր կենտրոններ Հաթերքը և Ականաբերդը, Դադի, Խութայա, Բերդաձորի վանքերը և այլն։

Գյուղի շրջապատում արձանագրություններ ունեցող հուշարձանները հետևյալներն են.

Ա. Մայրաքաղաք կամ Տիրամայր—*վանական խումբ, բաղկացած է մի մեծ և մի փոքր եկեղեցուց և սրանց կից մեծ գավթից, որի մի մասը անջատված է և, դատելով պատերին եղած մեծ խորշերից, վեր է ածվել գրատան։ Բոլոր շենքերն այժմ փլատակների կույտեր են, որոնց մեջ մնացած պատերն են մասամբ կանգուն։ Գտնվում է գյուղի կենտրոնում։ Հնում վանքի շուրջը տարածված է եղել ընդարձակ գերեզմանատուն, որից այժմ ոչինչ չի մնացել։*

Բ. Եղցու Թալա—*հին գյուղատեղ՝ գյուղի արևմտյան եզրի բարձրադիր տափարակի վրա այստեղ կա մի փոքրիկ եկեղեցու ավերակ, շրջապատում՝ խաչքարեր և տապանաքարեր։*

Գ. Հին Վաղուհաս—*գյուղատեղ, գտնվում է գյուղից հարավ 2—3 կմ հեռու։ Գյուղատեղում պահպանվել են ընդարձակ եկեղեցու ավերակներ՝ շուրջը գերեզմանատուն։ Նախկինում այստեղ կանգնած է եղել 3 մետրաչափ բարձրության մի գեղաքանդակ խաչքար (արձ. № 382)։ Այժմ ավերակները մեծ մասամբ մաքրված և արտերի են վերածված. խաչքարը նույնպես չգտանք*

Դ. Վարդանլու—*գյուղատեղ. կենտրոնում կանգնած է մի փոքր եկեղեցի՝ իր փոքր գավթով և մի մատուռ։ Շենքերը անտաշ քարերով են, միակ արձանագրությունը գտնվում է եկեղեցու մուտքի բարավորին։*

Դեռևս Բարխուդարյանցը հաղորդում է, որ այս գյուղի սահմաններում և հատկապես «Մայրաքաղաք» եկեղեցու պատերին շատ արձանագրություններ են եղել, բայց ոչնչացվել են։ Մեր ժողովածուում այս վայրից մտել են 11 արձանագրություն, որոնցից 3-ը հրատարակվում են առաջին անգամ։

373. «ՄԱՑՐԱՔԱՂԱՔ» *եկեղեցու հյուսիսային պատի խորանանման ներս ընկած մասում, ներքուստ, 9 տող.*

+ՈԼԲ ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵՆՍ
ՀԱՈՑԵՒՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵ
ՆՍՏՐԳՐԻԳՐՈԵՍՀԱՍԱՆ
ՈԴԻՎԱԽՏԱՆԳԱՇԻՆԵՑԻ
ԶԵԿԵՂԵՑԻ.... ..ՅԻՎԱ
ՍՆՑԱՆՑԱՆԱՑԻՄՈՑՔԱՒԹԵ
ՆԵՒԻՄՀՈԳՈՅԱՐԱՐԵՆ··ԱՌ-
ԱՋ···ՊԱԳԱՆԷՔՀԱՍԱ
ՆԱՅԱՂԱԹՍՅԻՇԷՔ····

:ՈԼԲ: (1183) ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵ⌊Ա⌋ՆՍ| ՀԱՈՑ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵ⌊Ա⌋ՆՍ ՏՐ. ԳՐԻԳՈՐՈ, ԵՍ ՀԱՍԱՆ| ՈՐԴԻ ՎԱԽՏԱՆԳԱ ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՍ . . . . ՎԱ|ՍՆ ՑԱՆՑԱՆԱՑ ԻՄՈՑ ՔԱՒՈՒԹԵ⌊Ա⌋|Ն. ԵՒ ԻՄ ՀՈԳՈՑ ԱՐԱՐԵՆ . . . ԱՌ|ԱՋ. ⌈ՈՐՔ ԵՐԿՐ⌉ՊԱԳԱ-ՆԷՔ ՀԱՍԱ|ՆԱ ՅԱՂԱԹՍ ՅԻՇԷՔ . . . :

Ծանոթ. *Բավական ջարդոտված տեղեր ունի, բայց տառերը լայն ու խորն են փորագրված, որով և մեծ մասամբ վերծանելի են։ Հրատարակիչները իրարից արտագրելով, վերջին չորս և կես տողերը բաց են թողել, որը շատ կարևոր է, Վախտանգ անունը դարձրել են Վասակ:*

Հրատ. Ջալալեանց, II, 232։ Բարխուդարեանց, 192։

374. «ՄԱՑՐԱՔԱՂԱՔ» *եկեղեցու հյուսիսային պատի խորանանման նկարի մեջ, ներքուստ, 4 տող.*

. . . .
ՍՈՒՐԲԵԿԵՂԵՑՈՅՍԶ
ԱՀԱԿՆՈՒԱՍՏՔԱՀԱ
ՆԱՅԻՇԵՑԷՔ

. . . |ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՑՍ Զ|Մ|ԱՀԱԿ ՆՈՒԱՍՏ ՔԱՀԱ|ՆԱ ՅԻՇԵՑԷՔ:

375. ԺԱՑՌԱԲԵԿՈՐԻ *վրա, որը գտնվում է գյուղի արևմտյան մասում, «Եղցու Թալա» կոչված վայրում, վրան խաչ և 7 տող.*

ԹՒՎ : ՈԽԳ : ԷՐ
ԵՍ ՍԱԴՈՒՆ
ԿԱՆԳԵՑԻ ԶԽԱՉՍ
ՈՐԴ ✝ ՈՅԻ
ՄՈՅ ՍՊԱՏԱ
ՅԱՂԱՒԹՍՅԻՂԵՑ
ԷՔ

ԹՒՎ :ՈԽԳ: (1194) ԷՐ|. ԵՍ ՍԱԴՈՒՆ| ԿԱՆԳ⌊Ն⌋ԵՑԻ ԶԽԱՉՍ ՈՐԴՈՑ Ի|ՄՈՑ Ս⌊Ն⌋ՊԱՏԱ|ՑԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑ|ԷՔ:

376. ԽԱՉՔԱՐ, *նեղ ու երկար գրանիտից, գտնվում է նախորդի մոտ, ստորին մասում, 7 տող.*

ԹՒՒՆԺԾԵԷՐ
ԵՍ ՍԱՐԳԻՍ
ԿԱԳՆԵՑԻԶԽ
ԱՉՍ ՈՐՔԵՐԿՐ
ՊԱԳԷ
ՔՅԱՂԱՒԹՍ
ՅԻՇԵՑԷՔ

ԹՒԻՆ :ՑԺԵ:(866) ԷՐ|. ԵՍ ՍԱՐԳԻՍ| ԿԱ⌊Ն⌋ԳՆԵՑԻ ԶԽ|ԱՉՍ. ՈՐՔ ԵՐԿՐ|ՊԱԳԷ⌊Ք⌋|ՅԱՂԱՒԹՍ| ՅԻՇԵՑԷՔ:

377. «ՄԱՅՐԱՔԱՂԱՔ» եկեղեցու գավթի խորանի ճակատին եղել է՝

Աստուծոյ շնորհիւն. ես Կոստանդին կաթողիկոս Ամենայն Հայոց, միաբանեցայ եպիսկոպոսարանիս ի ձեռն հոգևոր որդւոյ իմոյ տէր Մարգարէին. յիշխանութեան մեծի Ջալալ Դաւլին և յառաջնորդութեան սորայ տեառն Ներսիսի Աղուանից կաթուղիկոսի. և այլ սպասաւորք սուրբ ուխտիս հաստատեցին :Գ: պատարագ ի տաւնի տեառնընդառաջին. :Բ: ինձ, :Ա: տէր Մարգարին. կատարիչքըն աւրհնին յԱստուծոյ: Ով հանէ զաւետարանս յեպիսկոպոսարանէս, ինքն եղիցի որոշեալ և հանեալ ի Փառացն Աստուծոյ. ի թվիս :ՈՂԵ: (1246) էր:

Հրատ. Ջալալեանց, II, 232։ Բարխուդարեանց, 192։

378. «ԳՐԱՏԱՆ» հարավային պատի ստորին մասում.

Յառաջնորդութիւն Գրիգորոյ ես Սիմէոն և եղբարք իմ ետու շինել զփռնտախուցս և կազմել զգրատունս և եղբարք ետուն :Բ: աւր պատարագ. կատարիչքն աւրհնին . . . .

Հրատ. Բարխուդարեանց, 192։

379. ԳԱՎԹԻ մուտքի ճակատին, արտաքուստ.

ԶԳրիգորէս և զմայր և զամուսինն իւր յաղաւթս յիշեցէք. թիւ :ՉԺԷ: (1268):

Հրատ. Բարխուդարեանց, 192։

380. ԽԱՉՔԱՐԻ վրա, որը գտնվելիս է եղել բակի հյուսիսային մասում.

Յանուն Աստուծոյ ես Յոհան դրան էրէցս Վախտանկայ կանգնեցի զխաչս ի տապանի որդւոյ իմոյ Գրիգորայ, որ վախճանեալ է ի Քրիստոս. որք երկրպագէք՝ յիշեցէք ի Քրիստոս. թվին :ՈԿԷ: (1218)։

Ծանոթ. *Առնում ենք Ջալալյանից, Բարխուդարյանի մոտ թերի է, իմաստը տարբեր և թիվը՝ ՈԿԲ։*

Հրատ. Ջալալեանց, II, 233։ Բարխուդարեանց, 192։

381. «ՄԱՅՐԱՔԱՂԱՔ» եկեղեցու շրջապարսպի վրա.

Յանուն ամենասուրբ Երրորդութեան ես Վասակ, որդի Լեւքարին, յառաջնորդութեան տեառն Յովհաննիսի և միաբանացս: Եւ սոքա ետուն ինձ ի տարումն :Գ: աւուր ժամն. որք զայգին և զտօնատեղն առնեն, դատին ի տեառնէ:

Ծանոթ. *Զգացվում է, որ վերծանությունը ստույգ չէ։*

Հրատ. Ջալալեանց, II, 232—233։

382. ԽԱՉՔԱՐԻ վրա, որը գտնվելիս է եղել Հին Վաղուհաս գյուղատեղում.

Թիւն :ՈԿԵ: (1216). ես Սակր որդի Վախտանգա կանգնեցի զխաչս բարեխաւս առ Աստուած հոգո իմո և ետու զԹղեկրա այգին իւր հողով և կատապանաւ և Եզնանտին երկիրն ի սուրբ Գրիգոր Բերդաձորա և զԲախերին Մասաղիսն, և զմաքեցանց երկիրն և :Ա: ջաղաց ի ժամատուն բե հոգո. փրկութիւն ամուսնո

իմն, ի հայրապետութեանն տէր Յոհաննիսի: Ով զայս խափանէ և Բերդաձորո սահման կամ ի վիճակն ձեռն արկանէ կամ զրկէ, :ՅԺՐ: (318) հայրապետացն նզոված եղիցի. ամէն:

Ծանոթ. *Հրատարակիչը* կատապանաւ-ի *փոխարեն ունի* վատապանաւ, *ուղղում ենք մենք։*

Հրատ. Խ[աչիկ] վ[արդապետ], «Արարատ», *1896, էջ 81։*

383. ՎԱՐԴԱՆՂՈՒ ԳՅՈՒՂԱՏԵՂ, եկեղեցու մուտքի բարավորի վրա, 8 տող.

Ի թվիս :ՈԿԴ: (1215) էր. ի վերջին և ի նվաղիլ ժամանակիս,| ես Հասան դուսեր (?) մեծին Գրիգորոյ, աւուսին Տաւղանայ| իշխանի, շինեցի զեկեղեցիս ի փրկութիւն ն[ոգւոյ]| և առն իմն: Առաջնոր[դ]| լինի զաւա(?) զեկ[եղ]եցին| առն իմոյ արասցեն. էթէ ոք յիս|նոց կամ յաւտարաց խափանել ջ|անայ մեր մեղացն պարտակ|ան է. կատարիչք աւրհ|նին յԱ.

Հրատ. *Տէր-Մովսեսեան, Ազգ. հանգ., XXV, 78—79:*

27. ԲԵՐԴԱՁՈՐԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԿԱՄ ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ

Վաղուհաս գյուղից մոտ 10 կմ հեռու, Լաբան կոչված վայրում, ձորի եզրի բարձր լանջին է գտնվում այս գրեթե անհայտ և անշուք վանքը։ Այն բաղկացած է թաղածածկ փոքր եկեղեցուց և գավթից։ Վերջինիս հարավային և հյուսիսային պատերը անսովոր հաստ են և նրանց մեջ բացվող խորշերն ավանդատան տեսք ունեն։ Գավթին հարավից կից է մի փոքր մատուռ, որի շուրջը, հատկապես հյուսիսում և արևմուտքում՝ խուցերի և այլ շինքերի ավերակներն են տարածվում։

Վանական բոլոր այս շինքերը կառուցված են ճեղքված քարերով։ Իսկ պատերի արձանագրություններն փորագրված են ագուցված սալաքարերի վրա։

Այս հուշարձանը տեղագիր հեղինակները թռուցիկ կերպով են հիշատակել[1] ըստ երևույթին ոչ ոք չի տեսել այն, բացի Խաչիկ վարդապետից, որը հրատարակել է մի արձանագրություն և նշում է, որ կան նաև ուրիշները[2]։

Հուշարձանի արձանագրությունները, ինչպես նաև Սակո իշխանի տապանաքարը ապացուցում են, որ Վախթանգյան իշխանական տան Սակոյան ճյուղի տիրույթը եղել է այս վայրում[3]։

Ցավոք, մեր լուսանկարներն անհաջող են ստացվել, որովհետև հուշարձանի ներսը շատ մութ է, իսկ դրսի՝ հյուսիսային պատը, ուր գրված են արձանագրությունների մեծ մասը, բացի վատ լուսավորվելուց և մամռապատ լինելուց, ծածկված է մեծ ծառերի ճյուղերով։

Մեր ժողովածուն այս հուշարձանից պարունակում է 18 արձանագրություն, որոնցից 17-ը հրատարակվում են առաջին անգամ։

384. ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսային պատի արևելյան վերին մասում, արտաքուստ, 16 տող.



---

[1] Բարխուդարեանց, *Արցախ, էջ 193։*

[2] «Արարատ», *1898թ., էջ 81։*

[3] *Սակոաբերդ հիշատակվում է Արարատի շրջանի Մանուկ (այժմ ավերակ) գյուղի մի խաչքարի XIII դ. կեսերի արձանագրության մեջ (խմբ)։*